Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 482 ՇԱԲԱԹ 10 ՕԳՈՍՏՈՍ 1885 (Ն. Տ.) 22 ՕԳՈՍՏՈՍ 1885 12 ԶԻԼԳԱՏԷ 1302

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

[illegible] غلطه‌ده نورادونکیان خاننده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY,
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան դահեկան արծաթ	200
» » Վեցամսեայ » »	100
» » Եռամսեայ » »	50
Գաւառաց » և տեղական Թղթատարով տարեկան » »	240
Գաւառաց համար և տեղական Թղթատարով վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ, տարեկան ֆրանք	56
» » վեցամսեայ »	28

Դրսէն ղրկուած լրագրաց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է, Խմբագրութեան ղրկուած ոեւէ նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒԻՆ
ԻՍԹԸՐՆ ԷՃԸՆՍԻ
Գործակալութեան ձեռամբ, Գարաքէօյ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ
ՈՒՐԲԱԹ, 9 ՕԳՈՍՏՈՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՇԱԲԱԹԱԿԱՆ

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Վերջապէս Մակար Սրբազան Կաթողիկոս եղաւ։ Շաբթուս մեծ լուրն այս է։ Այս լուր տակաւին հաղորդուած չէ Պատրիարքարանի. պաշտօնական հեռագիր չէ եկած դեռ Կ. Պոլիս։ Բայց լուրը պաշտօնապէս հրատարակուած է արդէն Բեդրսպուրկի, Մոսքուայի, Օտէսայի և Տփղիսի լրագրաց մէջ, ինչպէս ամենէն առաջ ծանոյց մեր յարգոյ Թղթակիցն ի Բեդրսպուրկ։

Թէ այս լուր ի՛նչ տպաւորութիւն ըրաւ մեր վրայ, երկարօրէն բացատրեցինք մեր երեքշաբթի աւուր թուով։ Մեր ցաւօք սրտի իմացանք որ Ռուսիոյ Վեհ. Կայսրը չէ բարեհաճեր վաւերացնել Ամեն. Տ. Մելքիսեդեկ Սրբազանին ընտրութիւնն. որովհետեւ կը տեսնէինք թէ Ն. Սրբազնութեան վրայ միաբանած էին Թուրքիոյ և Ռուսիոյ ազգայինք. մինչ հաստատեալ Կաթողիկոսին վրայ յայտնի է թէ Ազգին մէկ փոքր մասը միայն միաբանած կրնար համարուիլ։

Այդ փոքր մաս գլխաւորապէս եկեղեցական դասն է, թէ՛ ի Ռուսիա և թէ՛ ի Թուրքիա։

Շաբթուս սկիզբէն ի վեր առիթ ունեցանք հաւաքելու այս ծանր խնդրութեան առթիւ եկեղեցական, երեսփոխանական, վարչական և ժողովրդական շրջանակներու մէջ արտայայտեալ տպաւորութիւններն, և ուշադրութեամբ դիտեցինք թէ Մակար Սրբազանին կաթողիկոսացման լուրն ոմանց կարծած աննպաստ տպաւորութիւնը չէր ըրած հայ արքեպիսկոպոսներու, եպիսկոպոսներու, վարդապետներու և քահանաներու վրայ։

Եկեղեցական ակումբներու մէջ կը խորհուի թէ Մակար Սրբազանին կաթողիկոսացման խնդիրն անպատճառ Սահմանադրութեան բանաբարման խնդիր մը նկատելու չենք. որովհետեւ ռուս կառավարութիւնն սկիզբէն ի վեր յայտարարած էր թէ Էջմիածնի կաթողիկոսին ընտրութիւնը Թուրքիոյ Հայոց Սահմանադրութեան օրինօք կամ Կ. Պոլսոյ Ազգ. Ժողովոյն որոշած տնօրինութեամբք չի կրնար կատարուիլ, այլ Պալաժենեայով։ Ռուսիա երբեք չպիտի ճանչէ մեր Սահմանադրութիւնը՝ զոհելով իւր Պալաժենեան, և հետեւապէս մեր սահմանադրական իրաւունքներ խնդրոյ ներքեւ չեն։— Եկեղեցւոյ օրէնքով, անշուշտ պէտք էր որ Ազգին մեծամասնութեան ընտրածը կաթողիկոս հռչակուէր, բայց քանի որ Պալաժենեան կայ ու կը մնայ, Էջմիածնի հայրապետք այդ օրէնքով պիտի ընտրուին, և մենք չենք կրնար երբեմն ընդունիլ և երբեմն մերժել մի և նոյն օրինօք ընտրեալ կաթողիկոսներն։ Անոնք Ռուսիոյ Հայոց համար օրինաւորապէս ընտրեալ կաթողիկոսներ են, և մեզ համար եւս այնպէս պէտք է լինին մինչեւ որ Օրէնքն իսկ փոխուի։ Ջանանք ուրեմն Պալաժենեան վերաքննել տալու. բայց զգուշանանք փոփոխել տալէ Պալաժենիոյ ընտրական մասը. զի այդ ընտրական եղանակ ճշմարտապէս համաձայն է մեր Եկեղեցւոյ ոգւոյն և աւանդութեանց, և ժողովրդային ազատական եղանակ մ'է կաթողիկոսի ընտրութեան, և ո՜ գիտէ, եթէ Սահմանադրութեան մէկ երկդիմի պարբերութիւնը չի կաշկանդէր զմեզ և եթէ գաւառք ուղղակի մասնակցէին երկրորդ պատուիրակներով, կաթողիկոսական ընտրութեան ելքը բոլորովին տարբեր կրնար լինել։

Խնդրոյն օրինական կողմն այսպէս նկատելէ յետոյ, դիտել կը տրուի թէ Մակար Սրբազան կը գտնուէր Եկեղեցական Համագումար Ժողովոյ ցանկին գլուխն։ Այս կ'ապացուցանէ բացարձակապէս և միանգամ ընդ միշտ, թէ Թուրքիոյ Հայոց եկեղեցական մասը բոլորովին արժանաւոր կը համարէր զՄակար Սրբազան Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռին վրայ բազմելու։ Դիտել կը տրուի նաեւ թէ Ազգ. Ժողովոյ 16 եկեղեցական Երեսփոխանաց ամենքն ալ Մակար Սրբազանի անունը դրած էին Եռանուն Ցանկին մէջ։ Բայց Երեսփոխանութիւնք գ'ուր երրորդ ընտրելին իսկ չըրաւ եկեղեցականութեան առաջին ընտրելին։ Անցեալ տարի Երեսփոխանութիւնն ունէր երեք ընտրելիներ, Ներսէս Պատրիարք, Խրիմեան Հայրիկ և Մելքիսեդեկ Սրբազան, որոց երեքն ալ անհատապէս Մակար Սրբազանէն առաւել արժանաւոր կը համարուէին։ Բայց այս տարի, երբ՝ հոգելոյս Պատրիարքին վախճանմամբ՝ հարկ եղաւ ո՛ և է անուն մը դնելով լնուլ Եռանուն Ցանկն, Երեսփոխանութիւնը դարձեալ չբարեհաճեցաւ Մակար Սրբազանին անունը գէթ երրորդ ընել։ Եկեղեցականք Ազգ. Ժողովոյ այս ընթացքը շատ ճարտար չեն գտներ, և կ'ըսեն թէ այդ պատճառաւ Ռուսիոյ հայ եկեղեցականութիւնը մեր Ազգ. Ժողովոյ ընթացքին դէմ զայրացաւ։ Գտնուեցան Սինոդի և Միաբանութեան անդամներ և մինչեւ իսկ Առաջնորդներ, որք գանգատեցան թէ Թուրքիոյ Հայք կաթողիկոսութիւնն իրենց սեփականել կ'ուզեն։ «Միթէ Ռուսիոյ հայ եկեղեցականութիւնն ստորի՞ն և անարժա՞ն մարմին մ'է, որ անոր մէջէն ո՛չ ոք Կաթողիկոս ընտրուի, կամ գէ՛թ երեք Ընտրելեաց Ցանկի մը մէջ դրուելու արժանաւոր համարուի։ Թուրքիոյ Հայք մօտաւորապէս երկու միլիոն են և մենք՝ մէկ միլիոն։ Երկու անգամ անոնցմէ Կաթողիկոսներ բազմեցան Էջմիածին. Ներելի չէ՞ միթէ որ անգամ մ'ալ մեզմէ ընտրուի Կաթողիկոսն։» Ի հաստատութիւն այս գանգատանաց, Պոլսէնակ բարձրաստիճան եկեղեցականք ոմանք կը յիշեցնեն մեզ թէ իրենց սիրեցեալ գլուխն՝ հանգուցեալ Պատրիարքը՝ Կաթողիկոսական Յանձ. Նախաժողովոյ մի կարեւոր նստին մէջ, յորում կը խորհրդակցուէր Մակար Սրբազանի ընտրութեան և հաստատման պատահականութեան վրայ, յայտարարած էր եռանդագին թէ «արդարութիւն և իմաստութիւն է որ այս անգամ ալ Կաթողիկոսը Ռուսիոյ Հայոցմէն ընտրուի, մանաւանդ երբ անոնց մէջ կայ ընտրելի մը որ [illegible] ամենայն ընտրելեաց արժանաւորագոյն է։» Այսպէս յայտարարած, և Մակար Սրբազանի ընտիր հանգամանաց վրայ երկարօրէն խօսած էր Ներսէս Սրբազան։ Բայց իւր յորդորներ ուշադրութեան չառնուեցան։

Էջմիածնէն բաժնուելու կամ Նորահաստատ Կաթողիկոսին անունը Թուրքիոյ Հայոց եկեղեցիներուն մէջ չյիշատակելու առաջարկը սարսափահար կ'ընէ մեր եկեղեցականները։ Նոքա կ'ըսեն թէ իրենց սրբազան պարտաւորութիւն է հսկել ազգային-եկեղեցական միութեան անխախտ պահպանման վրայ. և հետեւապէս իրենց եկեղեցական ուխտին դէմ մեղանչած կը լինին եթէ գործիք լինին այդպիսի յախուռն խորհրդոց։ Մակար Սրբազանի արժանեաց վրայ եկեղեցական դասուն մէջ շատ աւելի համարում կը տեսնուի քան աշխարհական դասուն մէջ։ Նոքա կ'ըսեն թէ Մակար Կաթողիկոսի օրով Հայաստանեայց Եկեղեցին անշուշտ չպիտի կործանի, և պէտք չունինք անպատճառ ենթադրելու թէ ռուս կառավարութիւնն Հայ Եկեղեցին կործանելու համար միայն հաստատած է զՆ. Սրբազնութիւն։ Զարին որոշման կրնան տրուիլ ուրիշ շատ տեսակ մեկնութիւններ, որք այնքան յուսահատական չլինին։ Օրինակի համար, Զարը կրնայ Ռուսիոյ հայ եկեղեցականութեան պահանջմանց ու գանգատանաց գոհացում մը տալու փափաքած լինել, (մանաւանդ որ գիտենք թէ Ռուսիոյ բարձրաստիճան հայ եկեղեցականք թէ՛ Ընտրողական Ժողովոյն մէջ և թէ՛ Ժողովէն դուրս և ընտրութենէն ետքն ո՛րպիսի ջանքեր ըրին Մակարի հաստատումն յաջողցնելու համար։) Նաեւ ռուս կառավարութիւնը կրնայ խնդիր ունեցած լինել Մելքիսեդեկ Սրբազանի անձին դէմ. կրնայ հաստատել ուզած լինել այն սկզբունք թէ Կաթողիկոսութիւնը Թուրքիոյ Եպիսկոպոսաց առանձնաշնորհումը պէտք չէ նկատուի. կրնայ, կէս դարու կիրառութենէ մը յետոյ, արդեամբ ի գործ դնել ուզած լինել Պալաժենիոյ այն տրամադրութիւն որով ինք արտօնեալ է նա՛եւ երկրորդ ընտրեալը Կաթողիկոս հռչակելու։ Այս ամեն նկատումներով, որոց ո՛չ մին հաւաստ կը միտի Հայ Եկեղեցին կործանել, Ռուսիոյ Նախարարաց Խորհուրդն և Զարը կրնան պատշաճ դատած լինել Մակար Սրբազանի հաստատումն։ Ամեն պարագայի մէջ, եթէ ռուս կառավարութիւնը նաեւ ազգամաշ դիտում մ'ունէր, գիտցած է զայն սքօղել 50 տարի յառաջ հաստատեալ օրէնքի մը ծածկոյթին տակ։ Այդ ծածկոյթը պատռելու համար մենք եւս նոյն կռուանին վրայ կենալու էինք, այսինքն գաւառներէն պատուիրակներ ղրկելու էինք, և յայնժամ թերեւս Մակար երկրորդ իսկ չէր լինէր, և որչափ ալ փափաքէր կաթողիկոսացնել զՄակար, ռուս կառավարութիւնն օրինաւորապէս կատարեալ ընտրութեան մը դէմ առարկութիւն չէր կրնար ընել։ Մեր բռնած ընթացքը ռուս կառավարութեան իրաւունք պիտի տայ Օրէնքն իւր կողմ առնուլ, մինչ աւելի ճարտարմտութեամբ մեք կրնայինք մեր կողմ ունենալ Օրէնքին ոյժն, և հասնիլ մեր ամենուս նպատակին, եթէ ամենուս նպատակն էր որ Մակար Սրբազան Կաթողիկոս չլինէր։

* * *

Ահա՛, այսպիսի նկատումներով, եկեղեցական ակումբներու մէջ սաստիկ հակակրութիւն մը չենք տեսներ ո՛չ Մակար Սրբազանի անձին դէմ, ո՛չ ալ Ն. Սրբազնութեան հաստատման դէմ։ Կը տեսնենք մանաւանդ խորին զարհուրանք ո՛ և է ձեւով ու պատրուակով ազգային հերձուած մը յարուցանելու գաղափարին դէմ։ Թերեւս, կ'ըսեն, Ազգին թշնամիներն, և գուցէ ռուս կառավարութիւնը, կը փորձէ դրդել Թուրքիոյ Հայերն Էջմիածնէն բաժնուելու, Ամենայն Հայոց Հայրապետութիւնն եւս առաւել տկարացնելու համար։ Ինչո՞ւ համար անխոհեմ ձեռնարկով մի առիթ տանք իւր այս տխուր դիտաւորութեան իրագործման։ Եւ ի՞նչ կը շահինք մերժելով զՄակար. միթէ պիտի ահաբեկի՞ ռուս կառավարութիւնն, և միթէ այդով պիտի պարտաւորե՞նք զնա հրաժարելու վէտօյի իրաւունքէն. կամ միթէ, չճանչելով զՄակար, պիտի մղե՞նք զՆ. Սրբազնութիւն հրաժարական տալու. բան մը զոր չի կրնար ընել, քանի որ՝ նախ քան զհաստատութիւնն՝ ի հարկէ ռուս կառավարութիւնն Ն. Սրբազնութենէն խոստում առած էր կաթողիկոսական պաշտօնը վարելու. կամ, վերջապէս, չճանչելով զնորահաստատ Կաթողիկոսը, մեր Սահմանադրական օրէնքն ընդունի՞լ պիտի տանք ռուս կառավարութեան։ Բոլոր ասոնք անհնարութիւններ են, կ'ըսուի, և մեր մերժման միակ հետեւանքը պիտի լինի վիհ մը բանալ Էջմիածնի և Թուրքիոյ Հայոց մէջ, որ թերեւս ճշդիւ ռուս կառավարութեան ուզած բանը լինի։ Իսկ եթէ կը փափաքինք՝ մերժողական ընթացք մը բռնելով՝ պարտաւորել Նոր Կաթողիկոսը մեզ գոհացում տալու ապագայ մասնակցութեան խնդրոյն մէջ, ասոր միակ միջոցն է՝ զինք ճանչնալու առթիւ՝ քաղաքավարօրէն յուզել զայս խնդիր, և հետամուտ լինել անոր կարգադրման, չմոռնալով սակայն թէ, Պալաժենիոյ ընտրական եղանակն աշխարհի լաւագոյն եղանակն է Կաթողիկոս մ'ընտրելու համար։ Մնաց որ, կ'ըսուի, Նոր Կաթողիկոսն իւր առջեւ ունի ազգային-եկեղեցական ծանր խնդիր մը, վարժարանաց խնդիրն. և ո՞րն օգտակար է այս խնդրոյ գոհացուցիչ կարգադրման համար. ունենա՞լ Կաթողիկոս մը, որ Ազգին երկու երրորդ մասէն տարամերժեալ է. թէ Կաթողիկոս մը, որ կրնայ ըսել և զգալ թէ իւր կռնակն ունի ամբողջ Ազգը . . .

* *

Մեք դիտաւորութիւն չունինք, այս հակիրճ տեսութեան մէջ, քննելու այս և այսպիսի կարծիքներ ու տպաւորութիւններ, որք կ'արտայայտուին եկեղեցական ակմբոց մէջ. Մեք զանոնք կ'արտագրենք պարզապէս յարգոյ ընթերցողաց տեղեկութեան համար միայն։ Խնդրոյն այս նոր և անհաճոյ երեւոյթին վրայ մեր կարծիքն արդէն յայտնած ենք, և այսօր ո՛չինչ ունինք աւելցնելու կամ զեղչելու։ Չենք ուզեր մանաւանդ մեր կողմէ կանխագատել ո՛ և է կէտ։ Չգիտենք թէ Ազգ. Ժողովն ի՛նչ ընթացք պիտի բռնէ։ Առայժմ հարկաւ սպասողական դիրք մը պիտի բռնէ մինչեւ որ Սինոդին կամ Նորահաստատ Կաթողիկոսին կողմէ պաշտօնական զեկուցում մը լինի։ Պէտք է մանաւանդ սպասել նոր և մանրամասն տեղեկութեանց, գիտնալու համար, որչափ հնար է, թէ ի՛նչպիսի նկատումներով և ի՛նչպիսի պայմանաց մէջ Զարն անտես ըրած է զՄելքիսեդեկ Սրբազան և վաւերացուցած է զՄակար Սրբազան։ Առանց այդպիսի ճշգրիտ տեղեկութեանց, կարելի չէ վերջնական կարծիք մը յայտնել, և պէտք է շատանալ տպաւորութիւններ իմանալով այսպիսի նորալուր և նորատեսիլ երեւոյթի մը առթիւ, մինչեւ որ առաջին վայրկենի յուզումն անցնի, և թեթեւօրէն արտայայտեալ տպաւորութիւնք տեղի տան լուրջ համոզումներու և ծանրախոհ նկատումներու, զորս ի հարկէ յառաջ պիտի բերեն իրաց վիճակին պաղ արեամբ քննութիւնն և խնդրոյն նախընթաց պարագայից և հաւանական հետեւանաց մէկ առ մէկ և ապահով կշռադատութիւնը։

* *

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՏՈՒՐՔԸ

Ազգը քանի մը տարի պարտաւորիչ տուրք մը պիտի վճարէ Երուսաղեմի վանքին դիզեալ պարտքը բառնալու համար։ Այս տուրք արու անհատի գլուխ հաստատուած է, չափահաս թէ մանուկ, ի գաւառս 3 ական ղրուշ, և ի Կ. Պոլիս 5 ական ղրուշ։ Գաւառաց մէջ 3 ական ղրուշը զինուորական տուրքին հետ միասին կը հաւաքուի։ Կ. Պոլսոյ մէջ Թաղ. Խորհուրդք պիտի հաւաքեն, և եթէ ոմանք զլանան, Երուսաղեմի Խորհրդարանական Յանձնաժողովը Կառավարութենէն իշխանութիւն ունի պարտաւորիչ եղանակաւ գանձելու։ Կ. Պոլսոյ բնիկները միայն պիտի մասնակցին 5 ական ղրուշի նպաստին, և պանդուխտներն իրենց հայրենի գաւառին մէջ 3ական ղրուշ պիտի վճարեն զինուորական տուրքին հետ։

Բայց աստ դիտողութիւն մը կը ծագի։

Կ. Պոլսոյ մէջ, ընտանեաց տէր և չքաւոր Հայ մը կրնայ քանի մը մանչեր ունենալ, մինչ բարեկեցիկ ազգային մը կրնայ բնաւ մանչ զաւակ չունենալ։ Այսպիսի մարդ մը 5 ղրուշ միայն պիտի վճարէ, մինչ աւելին պահանջել պարտականութիւն և արդարութիւն է, իսկ աւուր ապրուստ հազիւ հայթայթող շատ մը արհեստաւորներ իրենց կարողութեան չափէն վեր մասնակցութիւն մը պիտի ունենան այն միակ պատճառաւ որ իրենց զաւակները մանչեր են։

Գաւառաց մէջ այս անպատեհութեան առաջքն առնուած է, կարգադրութեամբ մը, որով թէպէտ զինուորական տուրքին քանակութիւնն այր անհատներու թուոյն վրայ կը հաստատուի, բայց բաշխումն ըստ կարողութեան կը սահմանուի։ Կը կարծենք թէ այսպէս պարտի լինել նաեւ Կ. Պոլսոյ Թաղերուն մէջ։ Պիտի որոշուի թէ, ըստ վերջին մարդահամարին, իւրաքանչիւր թաղ ո՛րչափ արու ազգային կը պարունակէ. և յետոյ Թաղ. Խորհուրդները նոյն թուոյն համեմատ վճարել հարկ եղած գումարը պիտի բաժնեն թաղեցւոց վրայ, ըստ կարողութեան նոցին։ Շնորհիւ այս կարգադրութեան, Երուսաղեմի տուրքին վճարումը ծանր բեռ մը չպիտի լինի Կ. Պոլսոյ ազգայնոց վրայ։ Զի երբ գաւառացիք 3 ական ղրուշը կը վճարեն, սկզբամբ ծանր չէ Կ. Պոլսեցւոց համար՝ վճարել 5 ական ղրուշ. բաւական է որ բաշխման մասին նոյն արդար տնօրինութիւնն ի գործ դրուի նա՛եւ ի Կ. Պոլիս։

Դիտողութեան արժանի ուրիշ կէտ մը սա է թէ, փորձովք հաստատուած է թէ, յոյժ դանդաղ կ'ընթանան ամեն ընդհանրական գործեր կամ հաւաքումներ, որք թողուած են Թաղ. Խորհրդոց։ Այս պատուարժան մարմինք տոգորեալ են ընդհանրապէս թաղային յոյժ անձուկ ոգւով մը։ Պատրիարքարանի գործերը դիւրացնելու մեծ յօժարակամութիւն չունին։ Հետեւապէս, չափազանց լաւատեսութիւն է ակնկալել թէ մեծ խնամ պիտի տանին Երուսաղեմի տուրքը ժողվելու, եթէ մասնաւոր մղում մը չտրուի անոնց։ Մեր կարծեօք, երբ մեր գաւառացի բազմակարօտ և բազմաչարչար եղբարք նոյնպէս պարտաւորիչ դրութեամբ մը կը վճարեն իրենց բաժինն, արդարութիւն է որ ի Կ. Պոլիս գործը Թաղ. Խորհրդոց բարեյօժարութեան և եթ թողուլ բաւ չհամարուի։

— 125 —

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ Գ.

ԽՈՒԹՔ

Սակայն կ'երկարէր այս տաժանելի նաւարկութիւն։ Փետրվար 2ին, չուելէն վեց օր յետոյ, Մագուարի տակաւին չէր տեսներ Օքլանտի եզերքը։ Քամին լաւ էր սակայն, և կը շարունակէր փչել արեւմտեան հարաւէն։ Բայց հոսանքը դէմ կուգար նաւին, և աւելի կը յամրացնէր անոր ընթացքը։ Ալեծուփ ծովը կը կոծէր անոր վերին մասերն և կը ճարճատեցնէր անոր փայտակերտ շրջանակներն, այնպէս որ դժուարաւ կը վերականգնէր ալեաց խոռոչներուն մէջէն։ Կայմակալ պարաններն ու սարանները, լաւ ձիգեալ չլինելով, ալեկոծ նաւուն մի կամ միւս կողմ տատանած ժամանակ՝ ուժգնապէս ցնցուելով կ'երերային։

Բարեբաղդաբար, Ուիլ Հալլէյ, իբրեւ քիչ փութաջան մարդ, ուժ չէր տար առագաստներուն, վասն զի բոլոր կայմերը կը տապալէին անխրկապաբար։ Ուստի Ճօն Մանկլս կը յուսար որ այդ անպիտան նաւ՝ առանց ուրիշ ձախողանաց՝ պիտի հասնէր ի նաւահանգիստ. բայց ցաւ կ'զգար իւր ընկերաց անհանգստութեան վրայ։

Սակայն ոչ տիկին Հէլէնա, ոչ Մարի Կրանթ չէին տրտնջեր, թէ և հեղեղանման անձրեւ մը զանոնք արգելափակ կը պահէր նաւուն գոգին մէջ։ Անդ, օդի պակասութիւնն եւ նաւուն ցնցումը սաստկապէս կը նեղէր զանոնք։ Այս պատճառաւ յաճախ նաւուն տախտակամածը կ'ելնէին՝ դիմագրաւելով օդին դէշութիւնը, մինչեւ որ դժնդակ քամին վերստին վար իջնելու հարկադրէր զանոնք։ Ուստի նորէն կը մտնէին այն նեղ ծակն, որ աւելի վաճառաց շտեմարան լինելու յարմարութիւն ունէր՝ քան թէ ուղեւորաց և մանաւանդ ուղեւորուհեաց բնակարան լինելու։

Յայնժամ իրենց ընկերները կը ջանային զբաղեցնել անոնց միտքը։ Բականել իւր պատմութիւններով ժամանակն սպաննել կը փորձէր, բայց շատ չէր յաջողէր։ Արդարեւ, միտքերն, այս վերադարձի ուղւոյն վրայ մոլորելով, վհատած էին։ Բամբայից կամ Աւստրալիոյ վրայ աշխարհագրին ըրած ճառախօսութիւններն ո՛րչափ ուշադրաւ էին երբեմն, այնչափ Նոր-Զելանտայի վրայ ըրած խորհրդածութիւնները ցուրտ անտարբերութեան կը հանդիպէին։ Որովհետեւ առանց յօժարութեան, և առանց հաճոյման, առանց կամաց և գրեթէ ճակատագրին ճնշման տակ կ'ուղեւորէին յայդ աղետալի յիշատակներով լի Նոր երկիր։ Մագուարի ուղեւորաց մէջ ամենէն արգահատելին էր Լորտ Կլէնարվան։ Յոյժ քիչ կը տեսնուէր նաւուն գոգին մէջ. չէր կրնար տեղ մը նստիլ։ Իւր ջղային գրգռեալ բնութիւն չէր կրնար չորս նեղ տախտակորմի մէջ բանտարկեալ կենալու հանդուրժել։ Ցերեկները, մինչեւ իսկ գիշերներն ալ, առանց հոգ ընելու հեղեղանման անձրեւն և ծովու ծփանքները, նաւուն տախտակամածին վրայ կը մնար, մերթ արմուկովը նաւուն ներքնափակ կողին կրթնած, մերթ ալ տենդային յուզմամբ քալելով։ Աչերն անդադար ծովուն լայնատարր տարածութեան վրայ սեւեռած էին։ Իւր դիտակն, օդին կարճատեւ հանդարտութեան ժամանակ, յամառութեամբ կը պտտէր անհուն միջոցին մէջ։ Կարծես թէ կը հարցափորձէր ծովուն մունջ կոհակներն։ Եթէ ձեռքէն գար, մէկ շարժմամբ պիտի պատառէր հորիզոնը ծածկող մէգը, շեղջաբարդ գոլորշիները։ Չէր կրնար համակերպիլ, և իւր դէմքը դառն վիշտ կ'արտայայտէր։ Զօրեղ մարդ, մինչեւ ցայնժամ երջանիկ և կարող, որ յանկարծ կը կորսնցնէր իւր կարողութիւնն ու երջանկութիւնն։

Ճօն Մանկլս չէր զատուէր անկէ, և կը հանդուրժէր օդին խստութեանց։ Այն օրը, Կլէնարվան, մէգին մէջ խրամատ մը բացուածին պէս, հորիզոնը կը զննէր յամառ կամակորութեամբ։ Ճօն Մանկլս քովը գնաց։

— Ձեր Ազնուութիւնը ցամա՞քը կը փնտռէ, հարցուց նմա։

Կլէնարվան բացասական նշան մ'ըրաւ գլխովը։

— Եւ սակայն, յարեց երիտասարդ նաւապետն, անշուշտ մեծ փափաք պարտիք ունենալ այս նաւէն դուրս ելնելու։ Արդէն երսուն-վեց ժամ առաջ պարտ էինք տեսնել Օքլանտի փարոսները։

Կլէնարվան չէր պատասխաներ։ Այլ կը նայէր միշտ, և վայրկեան մը չափ իւր դիտակն հորիզոնին ուղղեալ մնաց։

— Ցամաքն այդ կողմը չէ, ըսաւ Ճօն Մանկլս, հաճեցէք նաւուն աջ կողմը նայիլ։

— Ինչո՞ւ համար, Ճօ՛ն, պատասխանեց Կլէնարվան. ես ցամաքը չեմ փնտռեր։

— Ի՞նչ կ'ուզէք ուրեմն, Մի՛լորտ։

— [illegible], Տընգա՛ն, պատասխանեց Կլէնարվան բարկութեամբ։ Այս ծովափանց մօտ, այս ծովերուն մէջ պարտի գտնուիլ, ծովահէնի շարաչար արհեստը գործելով։ Այս կողմերն է, կ'ըսեմ քեզ, Ճօ՛ն, այս նաւական ուղւոյն վրայ ընդ մէջ Աւստրալիոյ և Նոր-Զելանտայի, և ես նախազգացում ունիմ թէ պիտի հանդիպինք նմա։

— Աստուած պահէ մեզ այդ հանդիպումէ, Մի՛լորտ։

— Ինչո՞ւ համար, Ճօ՛ն։

— Ձեր Ազնուութիւնը կը մոռնայ մեր վիճակն։ Ի՞նչ կրնանք ընել այս երկկայմին մէջ, եթէ Տընգան մեզ հալածէ։ Եւ ոչ իսկ կրնա՞նք փախչիլ։

— Փախչի՛լ, Ճօ՛ն։

— Այո՛, Մի՛լորտ, չենք կրնար փախչիլ, հետեւաբար կը բռնուինք, և այն թշուառականաց ձեռքը կ'իյնինք, և Պէն Ճօյս արդէն փորձով ցոյց տուաւ թէ չընկրկիր ոճրագործութեան առջեւ։ Մեր կեանքը չեմ մտածեր, մինչեւ ցմահ կը դիմադրենք։ Լա՛ւ։ Բայց յետո՞յ։ Խորհեցէք տիկին Կլէնարվանի վիճակը, Մի՛լորտ, խորհեցէք Մարի Կրանթի վիճակը։

— Խե՛ղճ կանայք, մրմնջեց Կլէնարվան։ Սիրտս կոտրած է, Ճօ՛ն, և երբեմն յուսահատութիւն կը տիրէ վրաս։ Կը թուի ինձ թէ նոր փորձութիւնք կ'սպասեն մեզ, և թէ երկինք մեզ դէմ ելած են։ Դողի մէջ եմ։

— Դո՞ւք, Միլո՛րտ։

— Ո՛չ ինձ համար, Ճօ՛ն, այլ իմ սիրելեաց համար, ձեր իսկ սիրելեաց համար։

— Մի՛ վախնաք, Մի՛լորտ, պատասխանեց երիտասարդ նաւապետն, ոչ ևս պատճառ մ'ունինք երկիւղի։ Մագուարի լաւ չընթանար, բայց վերջապէս կ'երթայ։ Ուիլ Հալլէյ անասնատիպ էակ մ'է, բայց ես աստ եմ և եթէ ցամաքին մօտերը վտանգաւոր թուին ինձ, նաւը նորէն բացը կը բերեմ։ Ուստի այս կողմէ քիչ կամ բնաւ վտանգ։ Բայց, Տընգանի հետ քովէ քով գալէ Աստուած պահէ մեզ, և եթէ Ձեր Ազնուութիւնը կը ջանայ տեսնել զայն, զգուշանալու և մանաւանդ անկէ փախչելու համար միայն պիտի տեսնել։

Ճօն Մանկլս իրաւունք ունէր։ Տընգանի հանդիպումն աղիտաբեր էր Մագուարիի, և կը կասկածուէր անոր հանդիպումէն այդ սեղմեալ ծովերուն մէջ, զոր ծովահէնք կրնային անպատժաբար ասպատակել։ Սակայն, նոյն օրը գոնէ, Տընգան չերեւցաւ, և Թուաֆոլտ-Պէյէն մեկնելէ յետոյ վեցերորդ գիշերն հասաւ՝ առանց Ճօն Մանկլսի երկիւղներուն իրագործման։

Բայց այդ գիշեր սարսափելի պիտի լինէր։ Իրիկուան ժամ ութին յանկարծ մութը կոխեց։ Երկինք յոյժ սպառնալից էին։ Նաւազական բնազդումն՝ արբեցական անզգայութեան յաղթելով՝ ներգործեց Ուիլ Հալլէյի վրայ։ Դուրս ելաւ իւր խցիկէն, աչերը շփելով և խոշոր ու կարմիր գլուխը ցնցելով։ Յետոյ ուժով մը շունչ առաւ, ինչպէս որ ուրիշ մը մեծ գաւաթ մը ջուր խմէր ինքզինք զգաստացնելու համար, և կայմերը քննեց։ Հովը կը զօրանար, և քառորդ մասամբ դէպ արեւմուտք դառնալով՝ Զելանտայի ափանց վրայ կը փչէր լիաշունչ։

Ուիլ Հալլէյ իւր մարդիկը կոչեց բուռն հայհոյութիւններով, բարձր առագաստները ամփոփել և միայն գիշերային առագաստները պարզել տուաւ։ Ճօն Մանկլս հաւնեցաւ այս ըրածին՝ առանց բան մ'ըսելու, վասն զի չէր ուզեր տեսակցիլ այդ բիրտ նաւազի հետ։ Բայց ոչ Կլէնարվան և ոչ ինք չմեկնեցան նաւուն տախտակամածէն։ Երկու ժամ յետոյ բուռն հով մը փչել սկսաւ։ Ուիլ Հալլէյ իւր թակաղակի առագաստները մասամբ ամփոփել տուաւ։

Երկու ժամ անցաւ։ Ծովը կ'ուռէր, Մագուարի ուժգնապէս կը ցնցուէր յատակէն. կարծես թէ ժայռեր կը քերէր։ Սակայն այնպէս չէր։ Իւր ծանր իրանը դժուարաւ կ'ելնէր կոհակներուն վրայ։ Այս պատճառաւ ալիքները նաւուն մէջ կը լցուէին։ Մակոյկն, որ նաւուն աջ կողէն կախուած էր, ալիքներէն յափշտակուելով անյայտ եղաւ։

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Վարչութեան Քաղաքական Ժողովը գումարեցաւ երէկ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Վսեմ. Նուրեան էֆէնտիի և հետեւեալ խնդիրները տնօրինեց.

Ա.—Ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան՝ Տեսուչ Խորհրդոց և Ելեւմտից Հոգաբարձութեան ընտրութեան ձեռնարկելով, հետեւեալները կազմակերպեց զայնս.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տօքթ. Յովսէփ էֆ. Շիշմանեան
Յովսէփ » Եուսուֆեան
Մկրտիչ » Մանուկեան
Նշան » Փափազեան
Կարապետ » Իւթիւճեան
Մկրտիչ » Մեղպուրեան
Տօքթ. Կոպերնիկ » Հիւնքեարպէյէն

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Միհրան էֆ. Ունճեան
Միհրան » Զօպանեան
Լեւոն » Փափազեան
Խնդիր » Քիւրքճեան
Շնորհք » Նոգաչեան
Պետրոս » Քէրէստէճեան
Յարութիւն » Սահակեան

ԵԼԵՒՄՏԻՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Մկրտիչ էֆ. Ճանըմեան
Բեթրոս » Եսմէրեան
Մելքոն » Նազիկեան
Ալիքսան » Խորասանճեան
Անտոն » Աղասեան
Պօղոս » Աստարճեան

Բ.—Տփղիսի կալուածոց նախորդ Հոգաբարձութեան կողմէ պատգամաւորութիւն մը ներկայանալով, Քաղ. Ժողովին ասկէ յառաջ Ազգ. Պատրիարքարանի իրաւասութեան դէմ Տփղիսցւոց կողմէ ի գործ դրուած ապօրէն շարժմանց և գործողութեանց համար ցաւ յայտնեց։ Ատենապետ էֆէնտին բացատրեց այդ ապօրէն շարժմանց ծանր հետեւանքներն, որք օրինական խառնութիւններ կը հրաւիրէին. բայց յարեց թէ Ս. Պատրիարք Հայրն, ի գործ դնելով իւր հայրական իշխանութիւն, տրամադիր էր ներում շնորհել։ Այս յայտարարութեան վրայ, Ս. Պատրիարք Հօր կողմէ ներում շնորհեցաւ Տփղիսցւոց, և պատգամաւորք ցաւ յայտնելով յիշեալ ըմբոստ շարժմանց համար, Նորին Սրբազնութեան աջը համբուրեցին։ Միանգամայն հարկ եղած յանձնարարութիւններն եղան արգիլելու համար այսպիսի արարքներու կրկնութիւնն, որ օրինաց առջեւ ծանր պատասխանատուութեան ներքեւ կը թողու անոնց հեղինակներն։

Ժողովը ձեռք առնելէ յետոյ Տփղիսի կալուածոց մատակարարութեան խնդիրն, Յանձնաժողով մը կարգեց՝ սոյն խնդրոյն նկատմամբ տրուած նախորդ որոշումներն, Տփղիսի վէճքէն քննելու և տեղեկագրելու համար այն եղանակն, որով կարելի լինի նոյն կալուածոց մատակարարութիւնն ապահովել վէճքէի տրամադրութեանց և Ներք. Վարչութեան սահմանադրական սկզբանց համաձայն։

Հետեւապէս հրահանգ տրուեցաւ նոյն կալուածները մատակարարող առժամանակեայ հոգաբարձուաց՝ որ հարկ եղած տեղեկութիւններն հաղորդեն նորակազմ Յանձնաժողովին։

Յանձնաժողովոյ անդամք են

Յակոբ էֆէնտի Ֆրէնկեան
Ալիքսան » Սագայեան
Յակոբ » Զօպանեան

Գ.—Ղալաթիոյ Ներք. Վարժարանի Հոգաբարձութեան անդամներէն ոմանք հրաժարական մատուցած լինելով, Ժողովը նկատելով որ տակաւին չունի ի ձեռին Ղալաթիոյ Կալուածոց Հոգաբարձութեան և Թաղային Ատենակի վերջին հաշուեցոյցերն, յառաջիկայ նստին վերապահեց նոյն վարժարանի վերաբերեալ բոլոր խնդրոց նկատառումը։

Դ.—Պալքէսիրի ազգ. ժողովոյ և Առաջնորդի ընտրութեան տեղեկագիրք հասած լինելով, Ժողովն ի նկատ առաւ գործոյն սովորութիւնն և իւր կողմէ հաւանելով սոյն ընտրութեանց՝ Նախագահ Ս. Հօր յանձնեց ստանալ նաեւ Կրօն. Ժողովոյ հաճութիւնն և փութացնել հաստատութեանց կոնդակները։

Ե.—Նոյնպէս նկատողութեան առնելով Արաբկիրի Կրօն. և Քաղ. Ժողովոց ընտրութեան տեղեկագիրն և այս ընտրութեանց դէմ տեղի ունեցած բողոքներն, օրինապէս անհիմն գտաւ այդ բողոքներն և հաւանելով ընտրութեանց, Նախագահ Ս. Հօր յանձնեց ստանալ նաեւ Կրօն. Ժողովոյ հաճութիւնն և յուղարկել հաստատութեանց կոնդակներն։

Զ.—Ի քնին առնլով նախորդ Տնտես. Խորհրդոյ անդամ Զօպանեան էֆէնտիի դէմ տեղի ունեցած հրատարակութիւնները, տեսաւ որ ասկէ առաջ Ներք. Վարչութեան կողմէ այս մասին կատարուած քննութեանց արդիւնքն հաստատած է նոյն ամբաստանութեանց անհիմն լինելը, հետեւաբար որոշեց զայն յայտարարել ի պաշտօնէ։

Է.—Նկատողութեան առնլով Պատրիարքական և Առաջնորդական Պէրաթաց շնորհման առթիւ Ազգ. Ժողովոյ որոշման համեմատ առ Բ. Դուռն մատուցանելի Ուղերձին ծրագիրն, որ խմբագրուած էր Խառն Ժողովոյ կողմէ կարգեալ Յանձնախմբի մը միջոցաւ, ընդունեց զայն և որոշեց մատուցանել առ որ անկ է։

* * *

Քաղաքական Ժողովոյ երէկի նստին ներկայ էին ինն անդամք։ Կոստանդ էֆէնտի Կոստանդեան ետ առած լինելով իւր հրաժարականն, ներկայից մէջ էր։ Սեթեան Միհրան էֆէնտի ուղեւորութեան և Համազասպ Պալլարեան էֆէնտի ստիպողական գործի մը պատճառաւ բացակայ էին, ինչպէս նաեւ Ունճեան Աբիկ էֆէնտի, որ ետ առած է իւր հրաժարական. իսկ Բարաղամեան Տիգրան էֆէնտի Քաղ. Ժողովոյ միակ անդամն է որ կը պնդէ իւր հրաժարականին վրայ։

* * *

Նալլը խանի Հայոց ողբալի վիճակն յայտնի է։ Աղէտաբեր հրդեհի մը յաջորդած են ոչ նուազ աղէտալից ողողմունք, և ժողովուրդն յետին թշուառութեան մատնուած է։

Ամեն. Ս. Պատրիարք Հօր [illegible] վրայ, Ներքին գործոց Բարձր. Նախարարը բարեհաճեցաւ հրաման զրկել Էնկիւրիի կուսակալին, որպէս զի հարկ եղած նպաստներն ընծայէ Նալլը Խանի հրկիզելոց։

Որովհետեւ մեր այս դժբախտ ազգայինք, ողողումներէն հնձոց ծանրապէս վնասուելուն պատճառաւ, տրոց շնորհում խնդրած էին, Պատրիարքարանն իւր կողմէ ծանոյց թէ արդէն Տէրութեան Օրինագրքին (Տէ--բէ--ր) մէջ յատուկ տրամադրութիւնք կան, որոց զօրութեամբ իրենցմէ տուրք չպիտի պահանջուի, ինչպէս չի պահանջուիր ամեն անգամ որ անակնկալելի աղէտ մը կը փճացնէ տեղւոյ մը ժողովրդեան հունձքն ու հասոյթները։

* * *

Ազգային տուրքի խնդիրն ի մօտոյ վերստին պիտի զբաղեցնէ Ազգ. Երեսփ. Ժողովը։

Քաղաքական Ժողովն, յետ երկար խորհրդակցութեան, յանգած է սա եզրակացութեան թէ ազգ. տուրքը բաժնի վրայ հաստատելէն աւելի արդար, աւելի քանաւոր և աւելի արդիւնաւոր լինել կը խոստանայ տարբեր ծրագիր մը, որուն համեմատ ազգ. տուրքը միօրինակ պիտի լինի, բայց անկարողներուն բաժինն, ինչպէս նաեւ իբրեւ վարժապետ, իբրեւ գրագէտ և այլ հանգամանօք Ազգին ծառայելով, տուրք վճարելու կարողութիւն չունեցողներուն բաժինները բարեկեցիկ ազգայնոց վրայ վրայ պիտի բարդուի, որք իրենց տուրքի բաժինն իբրեւ պարտաւորեալ տուրք վճարելէն զատ, իրենց կարողութեան համեմատ մէկ մէկ գումար ալ իբրեւ նուէր պիտի վճարեն, ի հաշիւ հասարակութեան այն անդամոց որք չեն վճարեր։ Ամեն Հայ պարտաւոր է 25 կամ 75 ղրուշ վճարել, եթէ չվճարէ, ազգային իրաւունքներէն կը զրկուի. բայց կան կարգ մը ազգայինք որք օրինօք զերծ են տուրք վճարելու պարտաւորութենէն. արդ, ամեն բարեկեցիկ ազգային, իւր 75 ղրուշը վճարելէն զատ, գումար մ'ալ պիտի վճարէ, որ կրնայ մինչեւ իսկ քանի մը հարիւր ղրուշի հասնիլ, ի հաշիւ անոնց որք չեն կրնար վճարել։ Այս է Քաղ. Ժողովին մտածումն, որուն ի նպաստ շատ բաներ կրնան ըսուիլ անշուշտ։

* * *

Կը լսենք թէ Քաղ. Ժողովը կը պատրաստէ ծրագիր մը, որով Ազգ. Ժողովոյն պիտի առաջարկէ, իբրեւ միակ միջոց Ղալաթիոյ խնդրոյ միանգամ ընդ միշտ վերջ տալու, յայտարարել, ինչ որ իրողութեամբք հաստատեալ է, թէ Ղալաթիոյ եկեղեցին թաղական պարզ եկեղեցի մը չէ ուրիշ եկեղեցեաց նման, այլ հանրային ուխտատեղի մ'է. թէ Ղալաթիոյ կալուածք միայն թաղեցւոց ստացուածքը չեն, այլ առաւելապէս հանրութեան նուէրներէն գոյացեալ են, և հետեւապէս, ո՛չ արդար է, ո՛չ ալ ազգային շահուց նպաստաւոր, որ Ղալաթիոյ թաղը կառավարուի միայն թաղեցիներու ձեռամբ։ Հարկ է որ մասամբ կամ ամբողջովին կեդրոնական իշխանութիւնն ստանձնէ Ղալաթիոյ մատակարարութիւնը։ Կը լսենք նաեւ թէ նմանօրինակ տնօրինութիւն մ'ալ Գարակէօզեանի համար կ'առաջարկուի։

* * *

Թուրք կ'իմանայ թէ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն շաբթուս մէջ Շէյխ Իսլամի հետ տեսակցելով Երուսաղէմի ծանուցեալ կալուածական խնդրոյն վրայօք ինչ ինչ առաջարկութիւններ ներկայելէ յետոյ, Դատական և Կրօնական գործոց պաշտօնատունն երթալով Նախարարին հետ տեսակցեր եւ յայտարարեր է թէ Մելքիսեդեկ եպիսկոպոս բուէից մեծամասնութեամբ Էջմիածնայ կաթողիկոս ընտրուած բայց Ռուսիոյ կայսեր կողմէն երկրորդ քանդիտատ Մակար եպիսկոպոսի կաթողիկոսութիւնն հաստատուած լինելով, Ազգը չպիտի կրնայ ընդունիլ սոյն վերջնոյն կաթողիկոսութիւնն։

Աւելորդ է ըսել թէ մեր Թուրք պաշտօնակցին այս տեղեկութիւնները սխալ են։

* * *

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն առ Վեհ. Սուլթանն մատուցանելի ուղերձն այսօր Բարձր. Մեծ-Եպարքոսին պիտի մատուցանէ անձամբ։

* * *

Դպրոցական սիրուն հանդէս մը երէկ Իւսկիւտար Իճատիէ վարժարանին մէջ համախմբած էր գիւղին հայ հասարակութիւնն որ երկար ատենէ զրկուած էր այդպիսի վայելքներէ։ Յայտնի է թէ Իճատիէի ազգային երկսեռ վարժարանը բաւական ժամանակէ հետէ փակուած էր, և թէ Մ. Արնաւուտեան էֆէնտի մասնաւոր պայմաններով վերջերս իւր վրայ առած էր վարժարանն, ամեն պատասխանատուութիւն իւր վրայ պահելով։

Հանդէսին կը նախագահէր Գեր. Գրիգորիս Եպիսկոպոս Ալէաթճեան։

Ուրախալի էր տեսնել վարժարանին երկսեռ աշակերտաց ցոյց տուած կարողութիւնն իրենց դասաւանդութեանց և ճառերուն մէջ։ Երգուած երգերն ալ իրենց ներդաշնակութեամբ մեծ ախորժով ընդունուեցան հանդիսականներէն։ Ապա, մրցանակներ բաշխուեցան յառաջադէմ աշակերտաց և աշակերտուհեաց։ Հանդէսը փակեցաւ Ս. Նախագահին օրհնութեամբ։

* * *

Քաղաքական Ժողովոյ երէկի նստի որոշմամբ, հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնն ուղղուեցաւ մայրաքաղաքիս բոլոր ազգ. լրագրաց։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Ազգային լրագրաց մէջ Ս. Էջմիածնի կաթողիկոսին հաստատութեանը վերաբերեալ լուրեր հրատարակուած և այս առթիւ այլ և այլ խորհրդածութիւններ և քննադատութիւններ սկսած են տեղի ունենալ։

Այս հրատարակութեանց առջեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովն հարկ կը համարի յայտարարել որ սոյն խնդրոյն նկատմամբ տակաւին որ և է պաշտօնական տեղեկութիւն չէ հաղորդուած Ազգային Պատրիարքարանի. և միանգամայն կը հրաւիրէ հայ լրագրապետներն որ ուշադրութեան առնլով խնդրոյն փափկութիւնն զգուշանան վիրաւորիչ եւ անպատշաճ հրատարակութիւններէ։

9 Օգոստոս 1885 (Կնիք)
Ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլիս

* * *

Էջմիածնէն կը գրեն Նոր-Դօրէ.

«Ս. Սինոդի բոլոր անդամները, բացի մէկէն, ճանապարհորդում են երկրի զանազան կողմերը։

Ճանապարհորդում են նոյնպէս և թեմական առաջնորդներից։

Պէտք է ասել, որ այս շոգերին քաղաքումը մնալը անտանելի է, աւելի լաւ է ճանապարհորդել գոնէ օդ ծծելու և բնութեան բարիքը վայելելու համար։ Ուրիշ բան է ձմեռը, այն ժամանակ մարդ սիրով քաղաքումն է մնում և նստած ժամանակ ունի որքան կարելի է շատ նախագծեր, յանձնաժողովներ և ուրիշ պրոյեկտներ կազմելու որոնք թէեւ երբեք իրագործուելու չեն լինելու։»

Եւ սակայն իրագործուեցան։

* * *

Պէօյիւքտէրէի Հռիփսիմեան երկսեռ Վարժարանի Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ թէ տարեկան մրցանակաբաշխութեան հանդէսը պիտի կատարուի վաղը, կիրակի առաւօտ, գիւղին Ս. Նիկողայոսի մէջ, յետ աւարտման եկեղեցական արարողութեան։

* * *

— Արձագանքի վերջին թիւոյն մէջ կը կարդանք.

Ցեղոյս «Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութիւնը» առանձին դրամական մրցանակ ունի սահմանած ամենաընտիր աշխատանքի համար որ լոյս է տեսել տարւոյ ընթացքում Ընկերութեան հրատարակութեանց մէջ։ Այդ մրցանակը այս տարի Ընկերութեան որոշման համաձայն տուել է Տօքտոր Պ. Ս. Մանսուրեանցը։

* * *

Ինչպէս որ արդէն ծանուցած էինք, այս գիշեր է որ Միացեալ ընկերութեանց Իւսկիւտարի օժանդակ Մասնախումբն Ամերիկեան Թատրոնին մէջ պիտի ներկայացնէ հինգ արարուածով տրամ մը, ՆԱՐՏԵՑՍԱԼ ՀՕՄԱՆՈՒՀԻՆ, և ծիծաղաշարժ զաւեշտ մը, ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄՆՏՈՒԿՆ։ Իւսկիւտարի մասնախումբը մին է առաջիններէն այն օժանդակ մարմնոց որք իրենց գործառնութեանց շրջանակին մէջ ամենամեծ ծառայութիւններ կը մատուցանեն Միացեալ Ընկերութեանց։ Բաղձալի է յուսալ թէ Իւսկիւտարի հասարակութիւնն, ինչպէս նախորդ տարիներ, այս տարի եւս պիտի փութայ քաջալերել զՄասնախումբն իւր ջանից մէջ։

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օգոստ. 10

ԸՆԿԵՐ. ԽՆԴԻՐՆԵՐ. Բողոքականութիւն և իւր արդիւնքը. (Շար. և վերջ). Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ. Կեդր. Ամերիկայի Հանրապետութիւններն և զօրավար Պառիոս. Լ. Բ.

ԿՐԹԱԿԱՆ. Ամերիկեան դաստիարակութիւն. Մ. ԹՕՓՃԱՆԷԼԵԱՆ

ԲՆԱԶՆՏԵՂԾԱԿԱՆ. [illegible]. Յ. ՍԵԹԵԱՆ

ՎԷՊ. Կոստանդնուպոլսի վրայ [illegible] (Շար. և վերջ). (ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ) և Թարգմ. Ս. ԴԱՒԹԵԱՆ

ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՑ. Արտաքին, Ներքին, Ազգային.

ՍԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ (ԿԶԱՎԻԷ ՏԸ ՄՈՆԹԷՊԷՆ) Թարգմ. Մ. ԶՕՊԱՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Առողջապահական բարձրագոյն Խորհուրդն իւր նախընթաց աւուր գումարման մէջ, որ տեղի ունեցաւ ընդ նախագահութեամբ արտաքին գործոց Նախարար Սաիտ փաշայի, երկարօրէն խորհրդակցեցաւ կայս. կառավարութեան կողմէ առաջարկեալ քարանթինայի միջոցներուն վրայ զորս յիշեցինք երէկ։

Խորհուրդն համակերպելով կայս. կառավարութեան փափաքանաց, հաստատեց Միջերկրականի ֆրանսական և սպանիական նաւահանգիստներէն եկող նաւուց համար հաստատեալ քարանթինային երկու աւուր բարձրացումն, որով այդ քարանթինան կը լինի ընդամենն տասներկու օր։

Գալով Վառնայէն եկող նաւուց քարանթինան չորս, և Քէօսթէնճէէն, Օտեսայէն և Դանուբէն եկող նաւուց քարանթինան երեք աւուր բարձրացնելու առաջարկին, Խորհուրդն բացատրեց այն պատճառներ որով առ այժմ օգտակար չհամարիր այդ անհաւասարութիւն մ'ընել և կը շատանայ 48 ժամու հսկողութեամբ որ հաստատուած է յիշեալ երկիրներէ եկող նաւուց համար։

Սաիտ փաշա Առողջապահական Խորհրդոյ սոյն բացատրութիւններն հաղորդեց Բ. Դրան որ պիտի քննէ զայնս և յետ այնր իւր կարծիքն յայտնէ։

* * *

Բերայի ակմբոց մէջ զրոյց մը կայ թէ Եգիպտոսի Խտիւին կողմէ յատուկ պաշտօնով բարձրաստիճան անձ մը պիտի գայ մայրաքաղաքս։ Կըսուի նաեւ թէ նախորդ Խտիւ Իսմայիլ փաշայի պաշտօնատարներէն Սապիթ փաշա եւս Պոլիս պիտի գայ։

* * *

Բէթլիսոյ նախորդ կառավարիչ Հասան Ֆիհմի փաշա, որ նոյն պաշտօնով Սերեզ փոխադրուած է, նախընթաց օր մայրաքաղաքս եկաւ իւր նոր պաշտօնատեղին երթալու համար։

Եւրոպիոյ մէջ հնտախտին ծաւալման առթիւ Ներքին գործոց Նախարարութիւնը գաւառաց բոլոր կուսակալներուն շրջաբերականներ ուղղելով, հրահանգ տուաւ քաղաքաց և գիւղօրէից մաքրութեան վերջին ծայր հոգ տանիլ։

* * *

Կը լսենք թէ Չէթինէի օսմ. դեսպան Ճէվատ փաշա իւր պաշտօնատեղին ուղեւորելուն, Գարատաղի կառավարութեան հետ բանակցութեան պիտի սկսի վերջնապէս աւարտելու համար թղթատարական պայմանագիրն, որ, ինչպէս արդէն ծանուցած ենք, պիտի կնքուի ընդ մէջ կայս. կառավարութեան և Գարատաղի իշխանապետութեան։

* * *

Վեհ. Սուլթանն հրամայած է Ծովային Նախարարութեան որ Անգլիոյ նաւարանաց մէջ [illegible] մեծ երկայնութեամբ զբօսանաւ մը շինել տայ իւր անձնական գործածութեան համար։

Կը կարծուի թէ այս զբօսանաւի շինութիւն 29,000 անգլ. ոսկւոյ կը կարօտի։

* * *

Ղալաթիոյ թերթ մը կ'իմանայ թէ Օսմ. Հանրային Պարտուց չմիացեալ արժէթղթոց վճարումը վեց ամսոյ յապաղում մը պիտի կրէ։

* * *

Բ. Դուռը մտադիր է Հռոմի Օսմանեան դեսպանի անուանումը կատարել մօտ օրերս։

Կըսուի թէ Աթէնքի օսմ. դեսպան Թէվֆիք պէյ՝ որ այժմ մայրաքաղաքս կը գտնուի, ամենէն աւելի հաւանականութիւն ունի այդ պաշտօնին կոչուելու։

* * *

Մոնիթէօր՝ առանց ստուգութիւնն երաշխաւորելու, կը ծանուցանէ թէ երկու օր առաջ Զափթիէի կողմէ եօթ դիակ գտնուած է, որք գաղտնի ոստիկանաց դիակներ լինել կը կարծուին։

Ֆրանսական և աւստրիական զօրահանդէսներու ներկայ գտնուելու համար կարգեալ սպայից մարմին մ'այսօր կը մեկնի մայրաքաղաքէս Վառնայի ճամբով։

* * *

Նեոսարիայէն առ [illegible] ուղղեալ նամակի մը մէջ կը կարդանք.

«Շահագրգիռ է տեսնել թէ քաղաքներն ինչպէս կը վերականգնին իրենց մոխիրներէն։ Ձեր թղթակիցը քանի մը շաբաթ առաջ առիթ ունեցաւ տեսնելու Հաճըն, Մարաշ և Զէյթուն։ Առաջինն, երկու տարի առաջ հրոյ ճարակ եղած, այժմ առաջուանէն աւելի գեղեցիկ և պատշաճաւոր քաղաք մ'է. վերաշինելու գործին մէջ ընելիք բաւական բան կայ տակաւին, այլ արդէն կատարուածը ապահովութիւն կուտայ թէ այն մեծ աղէտին հետեւանքն իրական բարիք մը պիտի լինի։ Միւսները տարի մ'առաջ այրեցան եւ վերաշինման գործն այնքան յառաջ տարուած չէ։ Ի Մարաշ, լաւ սկզբնաւորութիւն մը եղած է։ Վախնամ թէ այդ գործը տակաւին երկար պիտի լինի Զէյթունի համար, որ իւր ջրհոսանութեան և լեռներու մէջտեղ կիրճերով փեղկաւոր դիրքը հակառակ, մօտ ժամանակէն չպիտի կրնայ դառնալ գեղեցիկ և մաքուր քաղաք մը որուն բնական յարմարութիւն ունի։»

* * *

Լիւլէ-Պուրկազի Պատժական Ատենի Նախագահ Ալի Րիզա էֆէնտիի դէմ ասկէ առաջ ամբաստանութիւններ եղած լինելով, Դատական Նախարարութիւնն հրահանգ տուած էր Ադրիանուպոլսոյ դատական քննիչ Ազարէգեան Վսեմ. Սարգիս էֆէնտիի որ երթայ քննէ խնդիրը։

Սարգիս էֆէնտի խնդիրը տեղւոյն վրայ քննելէ յետոյ, տեղեկագիր մը զրկած է յիշեալ նախարարութեան յայտարարող թէ Ալի Րիզա էֆէնտիի դէմ եղած ամբաստանութիւնք ոխակալութեան արդիւնք են։

* * *

Նէօլօկօս կ'իմանայ թէ օսմանեան կառավարութիւնը մտադիր է բանակցութեան մտնել Զուիցերիոյ հետ, առեւտրական դաշնագրի մը կնքման համար։

* * *

Վերջերս ծանուցինք թէ Բոլուի մէջ մեծ հրդեհ մը ծագած էր։

Քասթամոնուի պաշտօնական թերթը կը հրատարակէ Բոլուի կառավարչին կողմէ այս աղէտին առթիւ ուղղեալ տեղեկագիրն, ուստից կ'երեւի թէ հրդեհը ծագեր է Քարամանլը թաղէն որ 90 տունէ կը բաղկանար և ամբողջովին այրեր է։ Այս թաղին մէջ կը բնակէին աղքատ ընտանիքներ որոցմէ քառասունն իրենց բոլոր կարասիներն ու գործիները կորուսեր են։ Մի միայն տանց հրկիզմամբ եղած վնասը 300,000 ղրուշ կը հաշուի։

Տեղական իշխանութիւնք հարկ եղած օգնութիւններն հասուցեր են տարաբաղդ հրկիզելոց։

* * *

Իզմիրի Քաղաքային Ատենի Նախագահ անուանեցաւ Իւլէմա Էսատ էֆէնտի, որ մայրաքաղաքիս մէջ դատական այլ և այլ պաշտօններ վարելէ յետոյ, փաստաբանութեամբ կը պարապէր վերջերս։

* * *

Հոտէյտաէն (Եէմէն) յուլիս 20 թուով կը գրեն առ Նէօլօկօս.

Քանի մ'օր առաջ կայսերական զօրաց գունդ մը, ընդ հրամանատարութեամբ Հազարապետ Ահմէտ Բէյիզ էֆէնտիի, Ճէպէլ Հանէշ զրկուեցաւ։ Կը կարծուի թէ ասոնց պաշտօն յանձնուած էր յիշեալ տեղւոյ գանձման համար տեղական իշխանութեան օժանդակել։ Յայտնի չէ թէ ինչ պատահեցաւ Հազարապետին և բնակչաց միջեւ, սա կայ միայն որ կռիւ մը ծագեցաւ և Ահմէտ Բէյիզ էֆէնտի վիրաւորեցաւ։

Յաջորդ օրը, կայս. զօրքերն յանկարծ խռովարարաց վրայ յարձակեցան և թնդանօթ մ'առին։

Հազարապետն իւր վրանն հաստատած Ճէպէլ Հանէշ լերան վրայ գտնուող ամրոցին առջեւ, ուստից շրջակայից վրայ կը հսկէ։

* * *

Քանի մ'օրէ հետէ մայրաքաղաքս կը գտնուի Փարիզի հռչակաւոր բժիշկներէն Տօքթ. Տէժարտէն Պօմէձ որ մասնաւորապէս եկած է շանց կատաղութիւնն ուսումնասիրելու համար։ Կը պատմեն թէ մեծ եղած է ֆրանսացի բժշկին զարմանքն Կ. Պոլիս գալէն ի վեր ո՛չ մէկ կատաղած շուն չգտնուելուն, մինչ ի Փարիզ, լրագրաց մէջ կարդացած էր թէ կատաղած շուներ ոստկալի կոտորածներ կընեն Վոսփորի ափանց վրայ։

Մեծանուն Տօքթէօրն՝ որ Բերա, Լիւքսէմպուրկի պանդոկը կը բնակի, բորոտութեան ուսումնասիրութեամբ կը զբաղի ուրեմն և առջի օրը Տօքթ. Զամպաքօ հետ բազմաթիւ բորոտներ այցելեց։ Տօքթ. Տիւժարտէն կը մեկնի քանի մ'օրէն, Կրետէ և անտի Յունաստան երթալու համար։

* * *

Ալլահվէրտի Յովհաննէս էֆէնտիի ամուսին Տիկին Լիւսի հինգշաբթի գիշեր մեռեր է ի Փարիզ։

ՍՊԱՌՆԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ԴԱՏԸ

Երէկ ծանուցինք համառօտիւ թէ Պոլսոյ Ոճրադատ Ատեանն իւր հինգշաբթի աւուր նստին մէջ 15ական տարւոյ շղթայակապ բանտարկութեան դատապարտած էր Մէհմէտ, Ահմէտ և Քէմալ անուն երեք երիտասարդներ։

Հետաքրքրութենէ զուրկ չենք համարիր պատմել աստ թէ ինչ տեսակ շահատակութիւններ ի գործ կը դնէին այդ դեռահաս չարագործք, որք մայրաքաղաքիս բնակչաց համար պատուհաս մը դառնալ կ'սպառնային։

Ներկայ տարւոյս մայիսի սկիզբն, Հաֆըզ փաշայի թոռ Ազիզ պէյ անստորագիր նամակ մը կ'ստանայ որ սա տողերը կը պարունակէր.

«Մեք երեք [illegible] ենք. ձեզի համար 500 ոսկի որոշեցինք, բայց Էֆէ-Պաշին 300 ի իջուց. այդ գումարն անպատճառ երկուշաբթի օր ժամ 7 ½ին Պէշիկթաշ, [illegible] փաշայի ծովեզերեայ ապարանքին մօտ քարաշէն կամարին ներքեւ քարին տակ դրէք. եթէ չի դնէք, յիշեցէք Թէփէ-Տէլէնլիներուն օրինակն, ձեր ապարանքն ալ յօդս կը ցնդի, կը զղջաք վերջը, բայց ի զուր։ Կառավարութեան իմաց տալն անօգուտ է, մենք լրտեսներ շատ ունինք, չենք վախնար. մի՛ կարծէք թէ ուրիշ անգամ ևս կը գրենք ձեզի, եթէ կուզէք ազատել ձեր անձը, բնակարանն ու ինչքը, փութացէք 300 ոսկին դնել որոշեալ տեղն, որոշեալ ժամուն»։

Ազիզ պէյ այս նամակն ստանալուն, այլայլած ոստիկանութեան կը դիմէ և ցոյց կուտայ զայն, Ոստիկանութիւնը խորհուրդ կուտայ անոր սա իմաստով պատասխան մը գրել.

«Ինձմէ 300 ոսկի ուզեր էք, ես հաւատ չէի որ այդքան գումար մը տամ, թէեւ ապարանքս մեծ կը տեսնէք, բայց պարտքի տակ ընկճուած եմ. այլ որովհետեւ դրամի պէտք ունիք, պարտք կը համարիմ 100 ոսկի վճարել ձեզ և ասոր համար մէկ շաբաթ պայմանաժամ կը խնդրեմ որպէս զի կահ կարասեաց մէկ մասը ծախեմ ու հայթայթեմ այդ գումարը»։

Այս նամակ կը դրուի որոշեալ քարին ներքեւ, որոշեալ ժամուն. ծպտեալ ոստիկաններ կամարէն քիչ հեռու կը հսկէին զգուշութեամբ, քանի մը վայրկեանէն կը տեսնեն որ մարդ մը կամարին ներքեւ կը մտնէ ու դուրս կ'ելնէ. անմիջապէս կը ձերբակալեն զայն ու գրպանները խուզարկելով կը գտնեն Ազիզ պէյի պատասխանը։ Կասկածի տեղի չէր մնար և հարցաքննութեան միջոցին մարդը կը խոստովանի թէ իւր անունն է Ցէյլիս Մէհմէտ, թէ ինք գրած էր անստորագիր նամակն և թէ երկու ընկեր եւս ունի՝ որք են Ցէյլիս Ահմէտ և Պէքճի Քէմալ, որք նոյնպէս ձերբակալուեցան։ Ասոնք երեքը միանալով դեռ քանի մ'օր առաջ նոյնիմաստ նամակ մը գրած էին Մոլլա Նէձմէտտին էֆէնտիի, որ կեանքն ազատելու համար 100 ոսկի թողած էր որոշեալ տեղն (այս գումարին 92 ոսկին Մէհմէտին վրայ գտնուեցաւ ձերբակալման պահուն), նոյնպէս սպառնական նամակ մ'ուղղած էին Սուլթան-Թէփէ թաղի մխտար Հաճի Մէհմէտ Աղային, 150 ոսկի պահանջելով։

Ահմէտի տունը խուզարկուելով, Նէձմէտտին Մոլլայի գրուած նամակին օրինակը գտան. Ահմէտ և Քէմալ հարցաքննուելով, իրենց կարգին կը խոստովանին ամեն ինչ, բայց կը յարեն թէ իրենք Մէհմէտի յորդորանաց վրայ չարագրած էին այդ նամակներն և տեղեկութիւն չունէին ուրիշ բանէ։ Մասնաւորապէս Քէմալ յայտնեց թէ իւր ընկերաց մէջ ինք միայն գիր գրել գիտնալով, մի միայն նամակը գրելու ծառայած էր։

Նախնական հարցաքննութիւնք աւարտելով, յանցաւորք հինգշաբթի օրը ներկայացան Պոլսոյ Պատժական Ատենին որուն կը նախագահէր Վսեմ. Վասիֆ էֆէնտի. Մէհմէտի և Ահմէտի կողմէ փաստաբան կանգնած էր Իզզէթ էֆէնտի. Քէմալի փաստաբանն էր [illegible] էֆէնտի։ Ամբաստանագիրը կարդացուելէ յետոյ, ամբաստանեալք պատասխանելով Նախագահին հարցմանց, կրկնեցին վերոյիշեալ խոստովանութիւններն, որով յայտ յանդիման կ'երեւէր թէ գաղտնի ընկերութիւն մը կազմած էին այս ճամբով բարեկեցիկ մարդիկ ահաբեկելու և ստակ կորզելու համար։

Ընդհ. դատախազի օգնական Համտի էֆէնտի Պատժական Օրինաց 41րդ յօդուածին համաձայն՝ երեք ամբաստանելոց ընկերակցաբար (-Ֆէր-քէ-) յանցաւորութեան հաստատումը խնդրեց և դատարանն յետ խորհրդակցութեան, այդ յանցաւորութիւնն որոշեց միաձայնութեամբ։

Այս որոշում յատենի ժողովոյ յայտարարուելէ յետոյ, Համտի էֆէնտի դարձեալ Պատժական Օրինաց 191րդ յօդուածի տրամադրութեան համաձայն պատիժ տնօրինուիլը պահանջեց։

Դատարանն յետ խորհրդակցութեան յայտարարեց իւր երկրորդ վճիռն, որով 15ական տարւոյ շղթայակապ բանտարկութեան կը դատապարտէր երեք ամբաստանեալներն ալ։

Այսպէս, շնորհիւ ոստիկանութեան աչալրջութեան և Պատժական Ատենի արդարադատ վճռոյն, Պոլսոյ հասարակութիւնը կ'ազատի երեք չարագործներէ, որք շարունակելով իրենց ընթացքն գուցէ դեռ բազում չարեաց պատճառ լինէին։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ
ԱԺՕՆՍ ՀԱՎԱՍ

ՀՆՏԱԽՏՆ ՅԱՆԳԼԻԱ

Լոնտրա, 21 օգոստոս

Վիտնէսի մէջ մարդ մը մեռաւ հնտախտէ։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Մատրիտ, 21 օգոստոս

Սպանիական լրագիրք, խօսելով Գարոլինեան կղզեաց խնդրոյն վրայ, խորհուրդ կուտան կառավարութեան՝ Գերմանիոյ հետ յարաբերութիւնները խզել։

Զրոյց կը պտտի թէ Մատրիտի գերմանական դեսպան կոմս Սոլմս-Սոննէնվալտ անյապաղ Պերլին պիտի վերադառնայ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 10 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	110 3/4
3 » » » (վաճառականի)	110 3/8
3 » Բարիզի » (պանքայի)	22 77 1/2
3 » » » (վաճառականի)	22 85

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ.

		Դահեկան
Երէկ երեկոյ գոց.	(Միաց. D. Սէրի	18 9
Զօրսային գոցուելէն վերջը	»	18 9 1/2
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	18 11
Բարձրագոյն գին	»	18 11 1/2
Նուազագոյն »		18 11
Կէս օրին		18 11 1/2

Փոխառութիւն 1858) » 1862)	A. Սէրի Գ. Կ. Ա. Ո.	33 30
» 1860) » 1863) » 1872)	B.	18 30
» 1865) » 1869) » 1873)	C.	18 10

Իւնիֆիէ Եգիպտական

Երէկ իրիկուն գոցուեցաւ	73 15
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	73 17 1/2
Կէս օրին	73 17 1/2

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Գ. Կ.	Անգ. Լր.	3 22
Քրէտի Ժէնէրալ	» »	Օսմ. »	6 32
Պանք տը Գոնս.	» »	» »	4 30
Սօս. Շանժ է վալէօր	» »	» »	3 30
Թրամուէյ	» »	» »	297 1/2
Րումէլիի երկաթուղի		Ֆր.	42
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ		»	—
Բաժնեթուղթ Լաւրիոնի		»	59

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 21 Օգոստոս, ժամ 5 վայրկ. 15 երեկոյ

Անգլ. Քօնսօլիտէ	100
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	16 9/16
» » » գոցուեցաւ	16 5/8
» » » Ա.	33 7/8
» » » Բ.	18 7/8
» » » Գ.	16 5/8
Օթօման 1871	71
Փոխառութիւն 1877	84 1/4
Պանք Օթօման	11 3/8
Ռուսական փոխառ. 1873	93 7/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	66
» առանձն. (բրիվիլէժիէ)	89 3/8
Տայրա Սանիէ	63 1/2
Տօմէնիալ (փոխառ. Րօչիլտ)	86 3/4
Հանգստեան պարտաթուղթ 4%	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիեննա, 21 Օգոստոս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	125 55 (*)
Օսմանեան երկաթուղի	20 50

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

ԻՒՍԿԻՒՏԱՐ, ՍԵԼԱՄՍԸԶ

Վարժարանիս Ժ. տարւոյ շրջանը կ'սկըսի յառաջիկայ Սեպտեմբեր 2, Երկուշաբթի օր ։

Ուսանողք պարտին մտնել մինչեւ Սեպտեմբեր 5, Հինգշաբթի առաւօտ, ուր դասախօսութիւնք պիտի սկսին ։

Նոր աշակերտ տալու փափաքող ծնողք կամ պաշտպանք կը հրաւիրուին բանակցիլ Տնօրէնին հետ, վարժարանին մէջ ։

Հիմնադիր-Տնօրէն
Ռ. Ց. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1885 Օգոստ. 7 1—4

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՔՕՂԵԼ ԲԱՅԸ

Ազգ. ժողովոյ վերջին նստին մէջ Տօքթ. Թիրեաքեան էֆ. կրօն. ժողովոյ միամեայ համարատուութիւնը քննադատած ժամանակ (սքօղել) բայը (սըքօղել) հնչեց ։ Կրօն. ժողովոյ Ատենապետ Գեր. Տ. Խորէն եպիսկոպոս Նար-պէյ ուղղեց քննադատին հնչումը, գիտել տալով թէ պէտք է հնչել ըսքօղել և ո՛չ թէ սըքօղել ։

Ազգ. ժողովը վայրկեան մը լեզուաց Ակադեմիայի կերպարանք առաւ, փոյթ չէ, անուանապէ՛ս թէ իրապէս ։

Նար-պէյ և Թիրեաքեան, որք հաւասարապէս հմուտ են հայերէն լեզուի, հաւանօրէն գրական հրապարակի վրայ պիտի փոխեն իրենց յարուցած խնդիրը լուծել ։ Իսկ մեզ կը մնայ այս խնդրոյն նկատմամբ մեր կարծիքն յայտնել ։

